

“ Անահիտ », ի Հնթերցադներուն

Այս միացեալ թիւով լրացած կը համարենք « Անահիտ »-ի հինգերորդ տարեշրջանը: Յայտարարած էինք տարեշրջանի առաջին միացեալ թիւին մէջ (թիւ 1 թուագրուած՝ տպագրական սըլսալով մը, զոր պէտք է ուղղել՝ թիւ 1 - 2), թէ չորս թիւ պիտի հրատարակէինք: Ատիկա անհնար եղաւ, որովհետեւ բաժանորդներու կէսէն աւելին, նոյն իսկ այժմ երբ 5 - 6 թիւը լոյս կը տեսնէ, դեռ չեն վնարած իրենց ետարուան բաժնեգիրքը, եւ կան բաւական թուով որ նոյն իսկ Դ. տարուան բաժնեգիրքը չեն վնարած տակաւին:

Վեցերորդ տարուան առաջին միացեալ թիւը լոյս պիտի տեսնէ յառաջիկայ հոկտեմբերի վերջերքը, կը խընդրենք մեր բաժանորդներէն որ իրենց

յետեալ պարտքերը հանին գէթ մինչեւ այդ թուականը վնարել, իսկ մեր այն բաժանորդները որ ցարդ աւելի պատանաւաչ եղած են՝ իրենց բաժնեգիրք շուտ հասցնելով մեզի, կը յուսանք որ այս անգամ եւս Զ. տարեշրջանի առաջին թիւին լոյս տեսնելէն առաջ կամ գէթ անոր լոյս տեսնելէն անմիջապէս յետոյ իրենց բաժնեգիրք պիտի հանին դրկել մեզի կամ յանձնել մեր գործակալներուն:

Մենք ու եւ է մէկէն աւելի կը փափահենք որ այս հանդէսը հրատարակուի կանոնաւոր կերպով, բայց ատիկա կախում ունի բաժնեգիրքներու կանոնաւոր վնարումէն:

Ա. Զ.

